

## ԳՈՐԾԱԴԻՐ

### ՆՈՅՏԵՄԲԵՐԻ 1-ԻՅ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԻՎԱՆԴՆԵՐԻՅ ԼՐԱՅՈՒՅԻՉ ԳՈՒՄԱՐՆԵՐ ԶԵՆ ԳԱՆՉԻ

Հոկտեմբերի 25-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու նախագահությամբ, անկազմվեց երկրի կառավարության հերթական նիստը:

Տարածված տեղեկատվության համաձայն՝ նիստում քննարկվեց Վրաստանի կառավարության «Համընդհանուր առողջապահության անցմանը նպաստակով իրականացվելիք որոշ միջոցառումների մասին» որոշման նախագիծը, որի հիման վրա նոյեմբերի 1-ից բուժ-հաստատություններում կիրականացվի՝ ախտորոշման հետ կապված խնդիրների հետ ֆինանսավորման նոր մոդել:

Ներկայացնելով նախագիծը՝ Վրաստանի առողջապահության նախարար Ջուրաբ Ազարաշվիլին նշեց, որ նոյեմբերի 1-ից կլինիկաներում բժշկական ծառայությունների սակագները կհաշվարկվեն ֆինանսավորման նոր մոդելի՝ «Դիարջի» համակարգի համաձայն:

Նրա խոսքով, կլինիկաներն այլևս չեն սահմանի հավելավճարներ հիվանդների համար, բացա-



ռությամբ՝ առողջապահության նախարարության հրամանի հիման վրա որոշումների: - Կառավարությունը կարելու որոշում է կայացրել ամենաարագ, ամենաճիշտ եւ ապացուցված (Շարունակությունը՝ 3-րդ էջում)

## ՀԱՅԱՍՏԱՆ

### ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ԿՅԱՆԿԱՆԱՄ, ՈՐ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԴԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԿՆՔՎԻ ՄԻՆՉԵՎ ՏԱՐԵՎԵՐԶ»

Հոկտեմբերի 26-ին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը երկրի Ազգային ժողովում, կառավարության անդամների հետ հարցուպատասխանի ընթացքում, հայտարարեց, որ Հայաստանի կառավարությունը կգործադրի բոլոր հնարավոր ջանքերը, որ Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագիրը ստորագրվի մինչև տարեվերջ:



- Անկեղծ պետք է ասեմ՝ ես ցանկանում եմ եւ կցանկանամ, որ այն կնքվի մինչև այս տարեվերջ: Ինչքանով է դա իրատեսական, ես այդ հարցին կպատաս-

խանեմ հետևյալ կերպ՝ ես եւ կառավարությունը բոլոր հնարավոր ջանքերը կգործադրենք, դա իրատեսական դառննելու համար: (Շարունակությունը՝ 7-րդ էջում)

## ՎՐԱՍՏԱՆ - ՀՈՒՆԳԱՐԻԱ

### ԱՏՈՐԱԳՐՎԵՑ ՎՐԱՑ-ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հոկտեմբերի 26-27-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին պաշտոնական այցով գտնվում էր Հունգարիայում:

Այցի շրջանակներում Վրաստանի վարչապետը հանդիպումներ ունեցավ Հունգարիայի վարչապետ Վիկտոր Օրբանի, Հունգարիայի խորհրդարանի Ազգային ժողովի նախագահ Լասլո Կովերի հետ, մասնակցեց միջկառավարական տնտեսական հանձնաժողովի աշխատանքին: Համաժողովում քննարկվեցին վրաց-հունգարական տարբեր ուղղություններով համագործակցությանն առնչվող հարցեր: Քննարկումնից հետո Վրաստանի եւ Հունգարիայի միջև ստորագրվեց ներդրումների պաշտպանության եւ ճանաչման համա-



ձայնագիր, որը, որոշակի ընթացակարգերից հետո, պաշտոնապես կհաստատվի:

Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, Հունգարիա կատարած պաշտոնական այցի շրջանակներում, պատվիրակության անդամների հետ ծաղկեպսակ խոնարհեց Հունգարիայի հերոսների հուշահամալիրին:

## ԱՅՑ

### ՈՒՉՍԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՅՈՒՄ, ԷՆԵՐԳՈՒՏՈՒՐՍՆԵՐԻ ՆԵՐԿՐՄԱՆ ԾԱՎԱԼԻ ԱՎԵԼԱՅՈՒՄ ԵՎ ՎՐԱՍՏԱՆ-ԱՂԲԵՋԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՌՆԿԱՐԸ ԱՂԲԵՋԱՆԻ ՆԱԽԱԳԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑԸ ՎՐԱՍՏԱՆ



Հոկտեմբերի 24-ին, աշխատանքային այցով Վրաստանում էր գտնվում Ադրբեջանի նախագահ Իլիհամ Ալիևը: Այցի շրջանակներում կայացավ Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու եւ Ադրբեջանի նախագահի հանդիպումը:

Երկուստեք աշխատանքային այցով Վրաստանում էր գտնվում Ադրբեջանի նախագահ Իլիհամ Ալիևը: Այցի շրջանակներում կայացավ Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու եւ Ադրբեջանի նախագահի հանդիպումը:

Հանդիպմանը կողմերն ընդգծեցին Վրաստանի եւ Ադրբեջանի միջև առկա բացառիկ բարեկամական հարաբերությունները եւ ռազմավարական գործընկերությունը: Ընդգծվեց ռազմավարական գործընկերության հանդիպումը: (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐ

### ՊԵՏՆԱԽԱՐԱՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ «ՔԱՅԼ ԴԵՊՈՒ ԼԱՎ ԱՊԱԳԱ» ԽԱՂԱՂ ՆԱԽԱՁԵՐՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոկտեմբերի 26-ին, Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Թեա Ախվեղիանին, երկրի խորհրդարանի տարածքային ամբողջականության վերականգնման եւ ապաստանապահման հարցերով ժամանակավոր հանձնաժողովի փակ նիստում, ներկայացրեց Վրաստանի կառավարության «Քայլ դեպի լավ ապագա» խաղաղ նախաձեռնության շրջանակներում իրականացված աշխատանքների հաշվետվությունը:



Խոսքը վերաբերում է պետնախարարի գրասենյակի գործունեությանը, մասնավորապես, Վրաստանի օկուպացված շրջանների ներգրավվածության եւ հաշտեցման պետական քաղաքականության իրականացման գործընթացում ձեռք բերված արդյունքներին:

- Ուզում եմ ասել, որ Վրաստանի վերանայումը համակարգելու համար՝ չափազանց կարեւոր ենք համարում ինտենսիվ համագործակցությունը խորհրդարանական հարթակում, Վրաստանի տարածքային ամբողջականության վերականգնման եւ ապաստանապահման հետ կապված ժամանակավոր խորհրդարանական հանձնաժողովի շրջանակներում, որի հետ մենք կանոնավոր համագործակցում ենք ինչ-

պես նաեւ քաղաքացիական հատվածի համայնքի հետ, որը նույնպես ներկա էր նիստին: Մենք քննարկել ենք Վրաստանի օկուպացված շրջաններում առկա իրավիճակը, ամենաբարդ մարտահրավերները, ներառյալ հունամիտար եւ իրավական ասպեկտները, ինչպես նաեւ մեր ապագա տեսլականները եւ չափազանց կարեւոր ու արդիական ուղղությունները, որոնցում մենք նախատեսում ենք բարձրացնել արդյունավետությունը մեր ընդհանուր նպատակին հասնելու համար: - նշեց պետնախարար Թեա Ախվեղիանին:

## ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ

### ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆԻ ՀԱՆԱԶՈՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ

Վրաստանում Հայաստանի նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Աշոտ Սրատյանը շարունակում է ճանաչողական հանդիպումները Վրաստանի գործադիր եւ օրենսդիր իշխանությունների, կրթական, մշակութային, գիտական ոլորտների ներկայացուցիչների հետ:

Հայաստանի դեսպանը հանդիպում ունեցավ Վրաստանի խորհրդարանի կրթության եւ գիտության կոմիտեի ղեկավար Գիորգի Ամիլխիաբարու, Թբիլիսիի պետական բժշկական համալսարանի ղեկավար Ջուրաբ Վաղաշկորիայի հետ:

Խորհրդարանում կայացավ հանդիպումը կողմերն անդրադարձան կրթության եւ գիտության ոլորտում համագործակցության ընդլայնման հարցում Վրաստանի եւ Հայաստանի խորհրդարանների ունեցած դե-

րակատարությանը: Ընդգծվեց երկու պետությունների միջև գիտակրթական ծրագրերի զարգացման եւ խորացման անհրաժեշտությունը:

Թբիլիսիի պետական բժշկական համալսարանի ղեկավար Ջուրաբ Վաղաշկորիայի հետ հանդիպմանը կողմերն անդրադարձան Թբիլիսիի պետական բժշկական համալսարանի եւ Երեւանի պետական բժշկական համալսարանի միջև համագործակցության հնարավորություններին:







## Շարքից շարք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

### ԳՈՐԾԱԴԻՐ

## ՆՈՅՏՄԲԵՐԻ 1-ԻՑ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԻՎԱՆԳՆԵՐԻՑ ԼՐԱՅՈՒՅԻՉ ԳՈՒՄԱՐՆԵՐ ԶԵՆ ԳԱՆՁԻ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

համակարգով բժշկական ծառայությունների ֆինանսավորման հետ կապված: Տասնյակ հազարավոր ծառայություններ, որոնց վրա սահմանվել են սակագներ, արդեն կհաշվարկվեն «Դիարջի» մեթոդաբանությամբ: Կոնկրետ բժշկական միջամտության սակագինը հաշվարկվում է ըստ բազային սակագնի եւ «Դիարջի»-ն կհաշվի՝ հիվանդի կլինիկա ներկայանալու մուտքից սկսած, ներառյալ՝ բուժումը եւ կլինիկայից դուրս գրվելը:

Կլինիկաներն այլևս չեն գանձի հիվանդներից որելե

լրացուցիչ վճարում, որը չի սահմանվում մեր պատվերով: Մենք տարեկան սահմանափակ հասցնում ենք 25000 լարի, որը ծածկելու է դեպքերի առնվազն 90 տոկոսը,- ընդգծեց առողջապահության նախարարը եւ հավելեց, որ դեկտեմբերից կլինիկաները խստորեն կվերահսկվեն:

- Դա խստորեն վերահսկվելու է մեր կողմից, եւ կլինիկան այլևս ֆինանսական մոտիվացիա չի ունենա: Նոյեմբերի 1-ից դեկտեմբեր մենք կունենանք, այսպես կոչված, պիլոտային ռեժիմ, եւ եթե կլինիկաներին որելե օգնություն պետք լինի, մենք նրանց

կօգնենք, պատժանիքներ չենք կիրառի: Հունվարի 1-ից խստորեն վերահսկելու ենք, որի արդյունքում առաջին դեպքի համար կլինի տուգանք, երկրորդ դեպքի հայտնաբերման դեպքում համընդհանուր առողջապահությունից ֆինանսավորումը կսահմանափակվի, եւ կլինիկան կհանվի ծրագրից,- ասաց Ջուրաբ Ազարաշվիլին:

Բացի այդ, կառավարության նիստում, նախարարներ



### ՎԱՎԵՐԱՑՎԵԼ Է ԵՐԿՆԻՇ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ

Վրաստանի Ազգային բանկը 2022 թվականին 10 տոկոս տնտեսական աճ է կանխատեսում:

Երկրի գլխավոր դրամատան փոխանցմամբ, Վրաստանում տնտեսական ակտիվությունը շարունակում է բարձր մնալ: «Ռուս-ուկրաինական պատերազմի եւ դրան ուղեկցող պատժամիջոցների հետեւանքով՝ զգալիորեն ավելացան միգրացիոն հոսքերը դեպի Վրաստան, ինչը խթանեց համատեղ պահանջարկը: Միջին տարեկան տնտեսական աճն այս տարվա առաջին ութ ամիսներին կազմել է 10,3 տոկոս», - ասված է Ազգային բանկի տարածած հաղորդագրության մեջ:

### ՆԱԽԱԶԵՆՈՒԹՅՈՒՆ

## ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍՈՐՔԻ ՆԱԽԱԳԻԾ



Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին աշխատանքային հանդիպում ունեցավ պաշտպանության նախարար Ջուանշեր Բուրժուլաձեի եւ նախարարության այլ ղեկավարների հետ: Հանդիպմանը քննարկվեց վարչապետ Իրակլի Դարիբաշվիլիի նախաձեռնությամբ մշակված պաշտպանության նոր օրենսգրքի նախագիծը:

թյունների, ներառում է զորակոչային եւ պահեստազորային համակարգերի արդիականացումը եւ զինծառայողների սոցիալական պայմանների հետագա բարելավումը: Ջուրակոչային եւ պահեստազորի համակարգե-

րի արդիականացումից հետո՝ ՊՆ կառավարման նոր մոտեցում կսահմանվի: Կատեղծվի զինակոչիկների բոլորովին նոր, ճկուն համակարգ: Պաշտպանական նոր օրենսգրքի նախագիծը մինչեւ տարեվերջ կներկայացվի Վրաստանի խորհրդարանի հաստատմանը:

«Պաշտպանության նոր օրենսգրքի նախագիծը, ի թիվս այլ առաջնահերթու-

ների հետագա բարելավումը: Ջուրակոչային եւ պահեստազորի համակարգե-

### ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՆ ԶԻ ԹԱՆԿԱՆԱ

Ինչպես հայտարարեց Վրաստանի էներգետիկայի եւ ջրամատակարարումը կարգավորող ազգային հանձնաժողովի նախագահ Դավիթ Նարմանիան, Վրաստանում չի նախատեսվում վերանայել էլեկտրաէներգիայի սակագինը:

- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մենք մի քանի ամիս առաջ էլեկտրաէներգիայի սակագնի վերաբերյալ որոշում ենք կայացրել եւ շարունակել ենք գործող սակագները, այս փուլում էլեկտրաէներգիայի սակագինը վերանայելու որոշում չկա,- ասաց Դավիթ Նարմանիան:

Էլեկտրաէներգիայի եւ կայուն զարգացման նախարար Լեւան Դավիթաշվիլին եւս հաստատեց, որ էլեկտրաէներգիայի թանկացում չի նախատեսվում:

### ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿԱՆ ԿՈՒՐՍԸ (27 հոկտեմբերի)

Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը:

Տարադրամ	Լարի
1 ԱՄՆ ԴՈԼԱՐ	2.7821
1 ԵՎՐՈ	2.7874
100 ՌՈՒՔԼԻ	4.5072
1000 ԴՐԱՄ	6.9981

## «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ» ԱՏԵՂԾՈՒՄ Է ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՅՈՒՐՈ

Վրաստանի խորհրդարանի իշխող «Վրացական երազանք» կուսակցությունը որոշել է ստեղծել հակակոռուպցիոն բյուրո, որի հիմնական խնդիրն է լինելու խթանել կոռուպցիայի դեմ պայքարը:

Ինչպես նշեց խորհրդարանի իրավական հարցերի հանձնաժողովի նախագահ Անրի Օխանաշվիլին, հակակոռուպցիոն բյուրոն կվերահսկի ընդհանուր հակակոռուպցիոն քաղաքականությունը սահմանող փաստաթղթի կյանքի կոչումն ու կհամակարգի համապատասխան մարմինների, կազմակերպությունների եւ պաշտոնատար անձանց գործունեությունը:

Անրի Օխանաշվիլու խոսքով, Հակակոռուպցիոն բյուրոն հաշվետու է լինելու խորհրդարանին եւ միջգերատեսչական հակակոռուպցիոն խորհրդին: Բյուրոյի ղեկավարը տարեկան հաշվետվությունը կներկայացնի խորհրդարանին, իսկ պարբերական հաշվետվությունները՝ միջգերատեսչական հակակոռուպցիոն խորհրդին:

Հակակոռուպցիոն բյուրոյի ղեկավարը կընտրվի բաց մրցույթային կարգով ստեղծված հանձնաժողովի կողմից՝ պետական գերատեսչությունների եւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ եւ կներկայացվի վարչապետին պաշտոնում նշանակվելու համար:

- Մեր կողմից ամբողջությամբ պատրաստված օրենսդրական փոփոխությունները ծառայում են Եվրահանձնաժողովի 12 կետից բաղկացած ծրագրի 4-րդ կետի կատարմանը եւ Վրաստանին ԵՄ անդամակցության թեկնածուի կարգավիճակ տալուն,- ասաց Անրի Օխանաշվիլին:



### ՀԱՆԴԻՊՈՒՄ ՊԵՏԱՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

## ՊԵՏԱԿԱՆ ՆՈՐ ՈՒՋՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՍԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄ



Իր խոսքում պետնախարար Թեա Ալվալեղիանին նշեց, որ պետական քաղաքականության նպատակն է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին վերապահել հավասար հնարավորություններ, ընդգծել իրական հանդուրժողականությունն ու առավելագույնս ներգրավել որոշումներ ընդունելու գործընթացում:

Ինչպես նշեց պետնախարարը՝ անցյալ տարի հաստատվեց 2021-2030 թվականների քաղաքացիական իրավահավասարության եւ ինտեգրման պետական ռազմավարությունը:

- Միջգերատեսչական կառավարական հանձնաժողովը պատասխանատվություն է կրում այդ ոլորտում իրականացվող քաղաքականության մշակման համար,- հայ-

Վրաստանի ժողովրդական պաշտպանի գրասենյակին առընթեր, ազգային փոքրամասնությունների խորհրդի անդամների եւ Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության պետնախարարի աշխատակազմի համատեղ նիստում, քննարկվեցին իրավահավասարության եւ ինտեգրման պետական ծրագրի տեսլականը, նպատակներն ու խնդիրները:

տարարեց Թեա Ալվալեղիանին՝ հավելելով, որ այդ ուղղությամբ աշխատանքներն իրականացվում են ոչ կառավարական կազմակերպությունների փորձագետների հետ միասին, միջազգային կազմակերպությունների՝ Եվրոպայի խորհրդի, Եվրամիության, ԵԱՀԿ-ի աջակցությամբ:

Հանդիպմանը պետնախարարի տեղակալ Լիա Գիգաուրին մանրամասն հաղորդեց 2021 թվականի եւ 2022 թվականի անցած ժամանակահատվածում վերոնշյալ ռազմավարության իրականացման գործընթացի մասին եւ խոսեց ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի մոնիթորինգի չորրորդ փուլի պետական հաշվետվության մասին:

- Մենք մոնիթորինգ անցկացրինք ազգային փոքրամասնություններով հոծաբնակ տարածաշրջաններում՝ Քվեմո Բարթիլում, Սամցխե-Ջավախեթիում, Կախեթի 48 գյուղերում,- նշեց Լիա Գիգաուրին եւ հավելեց, որ ուսումնասիրվեցին իրավահավասարության, կրթության, սոցիալ-տնտեսական ինտեգրման, միջմշակութային երկխոսության, լրատվամիջոցների հետ կապի հարցերը:

Ինչպես նշեց Լիա Գիգաուրին, վերոնշյալ տարածաշր-

ջանների 9 մանկապարտեզներում եւ 25 դպրոցներում, որտեղ ներդրված է բիլինգվալ կրթության համակարգը, ուժեղացված դասավանդվում է պետական լեզուն, 1334 ուսանողներ ներգրավված են «1+4» կրթական ծրագրում, ազգային փոքրամասնությունների շուրջ 300 ներկայացուցիչներ պետական լեզուն ուսումնառել են Ջուրաբ ժվանիայի անվան դպրոցում եւ Բարեկամության տանը:

Պետնախարարության հաշվետվության մեջ նշված է, որ Ախալքալաքի մունիցիպալիտետի սակրեբուլոյի պատգամավորների 84 տոկոսը ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ են, Նինոծմինդայի մունիցիպալիտետի սակրեբուլոյում այդ թիվը հասնում է 87,5 տոկոսի, Բոլնիսի մունիցիպալիտետի սակրեբուլոյում՝ 38, իսկ Սառնեուլիի մունիցիպալիտետի սակրեբուլոյում՝ 60 տոկոսի:

Հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության պետնախարարության հաշվետվությունը հստակորեն ներկայացրեց արդյունքներն այն վիթխարի ուշադրության, որը երկրի իշխանությունները հատկացնում են ազգային փոքրամասնությունների հետ կապված հարցերին:

ՄԻՔԱՅԵԼ ԱՅԻՆՆՈՎ



ՇՆՈՐՀԱՎՈՐԱԼՔՆԵՐ

Ինչպես արդեն հաղորդել ենք, վերջերս «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայրուրթյանը միաժամանակ արժանացավ «Թբիլիսիի պատվավոր քաղաքացու» կոչման շնորհմանն ու Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ պատվո բարձր շքանշանին: Ներկայացնում ենք խմբագրության փոստով վերոնշյալի առթիվ ստացված շնորհավորական ուղերձները:



Նինոծմինդայի մունիցիպալիտետի եւ անձամբ իմ անունից ի սրտե շնորհավորում եմ Ձեզ մեր սիրելի մայրաքաղաք «Թբիլիսիի պատվավոր քաղաքացի» կոչման արժանանալու եւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ պատվո բարձր շքանշանով պարգևատրվելու առթիվ, որն իրավամբ հանդիսանում է վրաց եւ հայ հավատակից մեր ժողովուրդների դարավոր բարեկամության առավել ամրապնդման գործում ունեցած Ձեր նշա-

նակալից վաստակի գնահատման խորհրդանիշը: Ձեր բազմակողմանի գործունեությամբ Դուք հոգ եք տանում վրաց-հայկական բարիդրացիական հարաբերությունների պահպանման մասին:

Մենք կրկնակի ուրախ ենք, որ արժանիորեն եմ գնահատվել մեր հարգարժան հայրենակցի գործունեությունն ու ավանդը եւ անկեղծորեն հպարտանում ենք Ձեր նվաճումներով:

Ցանկանում ենք Ձեզ արելշատություն եւ բեղմնավոր գործունեություն ի փառս մեր ժողովուրդների:


ԱՆԻ ՄՈՍՈՅԱՆ

Նինոծմինդայի քաղաքապետ

Ուրախությամբ տեղեկացա, որ քեզ՝ ծնունդով թբիլիսցու, մտածելակերպով թբիլիսցու, ապրելածեով ու վարքով թբիլիսցու շնորհվել է «Թբիլիսիի պատվավոր քաղաքացու» կոչում: Դա համարում եմ արժանի գնահատական արժանի մարդուն:

Մեր ծանոթության ժամանակներից, դեռևս 60-70-ական թվականներին, երբ որպես «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթի թղթակից սկսեցի ր աշխատել Վրաստանում, քո հրապարակումներում ակնհայտորեն զգացվում էր սերը հարազատ քաղաքի, ծննդավայր երկրի, նաեւ պատմական հայրենիքի նկատմամբ: Դա իր հաստատունը գտավ նաեւ քո հետագա գործունեությունում՝ «Վրաստան» թերթում, Վրաստանի նախագահի խորհրդակցանի կարգավիճակում...

Թանկագին բարեկամ, ի սրտե շնորհավորում եմ պատվավոր թբիլիսցու կոչումը: Համոզված եմ, որ քո կատարածի արժանի գնահատումը հիանալի ազդակ կդառնա ապագայի քո լավ գործերի համար:



ՌՈՒՆ ՄԵՏՐԵՎԵԼԻ

Վրաստանի Ազգային ակադեմիայի փոխնախագահ, ակադեմիկոս, պատմաբան



Թանկագին Վան, համացանցում «Վրաստան» թերթի հրապարակումից տեղեկացա՝ քեզ «Թբիլիսիի պատվավոր քաղաքացու», ապա նաեւ Հայ Առաքելական Եկեղեցու Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ պատվո բարձր շքանշանի շնորհման մասին: Եթե առաջինը քո ծննդավայրի նկատմամբ սիրո ու նվիրվածության արտահայտությունն է, ապա Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու բարձր պարգևը պատմական հայրենիքի, հայ-վրացական բարեկամության ամրապնդման գոր-

ծում քո ջանքերի արժանի գնահատականն է: Դա պնդում եմ ողջ պատասխանատվությամբ, քանզի Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան աշխատելու տարիներին դրանց ականատեսն ու մասնակիցն եմ եղել: Դու ալեհաստի մնամ կտրում-անցնում էիր հայ-վրացական բարեկամությանը խոչընդոտող բոլոր «ալիքները», նպատակամղվածորեն ամրապնդում այդ բարեկամությունը:


Թանկագին բարեկամ, շարունակիր գործել որպես ալեհաստ:

ԼԵՎՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

1993-1998 թվականներին Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան



Ի սրտե շնորհավորում ենք քեզ «Թբիլիսիի պատվավոր քաղաքացու» կոչման առթիվ: Համոզված ենք, որ որոշակի ուշացումով քեզ շնորհված այդ պատվավոր տիտղոսը լրիվությամբ ցուցադրում է այն մեծ սերն ու նվիրվածությունը, որ տածում ես քո ծննդավայրի՝ Թբիլիսիի նկատմամբ: Դա իր արտահայտությունն էր գտնում քո բազմաթիվ գործունեության գրեթե բոլոր մանրամասներում՝ լինել մարզական մեկնաբանություն, թե վերլուծական ծավալուն հրապարակում:



Լավ հիշում ենք 80-ական թվականների քո ոգեշունչ հոդվածները Թբիլիսիի «Դինամոյի» ձեռքբերումների մասին, առանձնապես Եվրոպայի զավթակիրների գավաթի եզրափակից հետո ջերմություն, սեր, ոգեւորում էր, ճառագում թերթում լույս տեսած քո հոդվածների յուրաքանչյուր բառից:

Կրկին շնորհավորում ենք պատվավոր տիտղոսի առթիվ, մաղթում քաջառողջություն եւ հաջողություններ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԶԻՎԱԶԵ ՎԱԼԵՐԻ ԳՈՒՑԱԵՎ

Թբիլիսիի «Դինամոյի» վետերան-ֆուտբոլիստներ, սպորտի վաստակավոր վարպետներ



Հարգարժան հայորդի, արդեն Թբիլիսիի պատվավոր քաղաքացի Վան Բայրուրթյան. Այսօր իմացա նաեւ Հայ Առաքելական Եկեղեցու կողմից պատվո բարձր՝ Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ շքանշանով Ձեր պարգևատրման մասին: Լցվեցի անհուն բերկրանքով իմ գրական-հասարակական գործունեության կարիք-որագույն տարիների մեջ Ձեզ հետ ծանոթ լինելու բախտն ունենալու համար: Դեռևս 1989 թվականից, երբ հուզումնառատ զգացումներով ու հայրենաշեն նոր ոգեւորումներով էին լի հայ եւ վրաց ժողովուրդները, ես գտնվում էի հայ մշակույթի համար որպես հենարան իր ուսը տրամադրած Թբիլիսիում եւ «խորհրդային Վրաստան» թերթի խմբագրատանը հանդիպեցի Ձեզ՝ որպես թերթի գլխավոր խմբագրի եւ սկսվեցին հայ ու վրացի բա-

նաստեղծների ստեղծագործությունների ու նրանց գրական բարեկամությունների մասին իմ հոդվածների տպագրությունները թերթում:

Սիրելի եւ արժանավոր հայորդի, որ պատասխանատու տարբեր աշխատանքներով եք կերտել Ձեր գործունեությունը Վրաստանում, վայելել ու դեռ երկար վայելելու եք տեղի հայ համայնքի սերն ու հարգանքը: Հայոց պարբերական մամուլի պանծալի պատմության մեջ «Վրաստան» թերթը, որի խմբագիրն եք 1987 թվականից, իր ուրույն տեղն ունի: Ի սրտե շնորհավորում եմ Ձեզ, նաեւ բոլորիս՝ մեծափառ Սրբեր Սահակ Պարթևի եւ Մեսրոպ Մաշտոցի անվան շքանշանով պարգևատրվելու համար: Թող հորիզոնները միշտ պայծառ ու խաղաղ մնան վիրահայոց եւ ընդհանրապես, հայոց համար:

ՖԵԼԻՔՍ ԲՆԻՉԻՆՅԱՆ

Հայաստանի Ֆրիտոյֆ Նանսեն ինստիտուտի հոգաբարձուների խորհրդի նախագահ, Լիտվայի մատուցած ծառայությունների համար շքանշանի ասպետ

Հարգելի Վան Բայրուրթյան, Ծնունդով թբիլիսցի եմ եւ «Վրաստան» թերթի մշտական ընթերցողը: Բացեցի թերթի վեբկայքը (www.vrastan.ge) ու շատ ուրախացա, որ Ձեզ շնորհվել է «Թբիլիսիի պատվավոր քաղաքացու» կոչումը:

Դա Ձեր բազմամյա գործունեության արժանի գնահատականն է: Մասնավորապես կուզեմայի ընդգծել Ձեր հավասարակշիռ քաղաքական մտածողությունը, որոնք նպաստում են հայ-վրացական բարեկամական հարաբերություններին:

Շնորհավորում եմ Ձեզ եւ ցանկանում մնաք առողջ, եռանդուն, հաջողությամբ շարունակեք Ձեր հայանպաստ գործերը: Բարի մաղթանքներով՝ ԳՐԻԳՈՐ ՅԱՅԼԱՅԱՆ ԱՄՆ, Կալիֆոռնիա ք. Կենսրեյ

ՏԱՐԱԾԱՆԵՐԶԱՆ

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԱՄՆ ԴԵՄՊԱՆԸ ԱՆԱԼՔԱԼՔԻԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏՈՒՄ

Վրաստանում ԱՄՆ դեսպան Քելլի Դեզմանը այցելեց Ախալքալաքի մունիցիպալիտետ:



Այցի շրջանակներում Քելլի Դեզմանը եղավ Ախալքալաքի Իլիա ճավճավաձեի անվան 3-րդ հանրակրթական դպրոցում, որտեղ հանդիպեց Ախալքալաքի եւ Ախալցխեի դպրոցների քաղաքացիական կրթության ակումբի անդամների հետ, ովքեր Քելլի Դեզմանին ներկայացրին, USAID ծրագրի շրջանակներում, Ախալցխեի երիտասարդական կենտրոնի հետ համատեղ իրականացված կիբերբուլինգի եւ կիբերամվտանգության վերաբերյալ հետազոտական մախագծի հաշվետվությունները:

Համոզված լինելով Ախալքալաքի մունիցիպալիտետի քաղաքապետ Մելքոն Մակարյանը, սակրեբուլոյի նախագահ Նաիրի Իրիցյանը, Ռեսուրս-կենտրոնի տնօրեն Թերեզա Չիվչյանը եւ մունիցիպալիտետի դպրոցների տնօրեններ ու ուսուցիչներ: Դեսպանը ուսանողների հետ կիսվեց կամավորության, մասնագիտության ընտրության եւ դպրոցի ինքնակառավարման հետ կապված սեփական փորձով: Նա անդրադարձավ Ամերիկայի դեսպանատան աջակցությամբ՝ տարածաշրջանում իրականացվող ծրագրերին, ինչի համար հյուրընկալող կողմը շնորհակալություն հայտնեց ամերիկացի ժողովրդին եւ ամերիկյան կառավարությանը:

Ուսանողները դեսպանին նվիրեցին խորհրդանշական հուշանվերներ:

ՀԱՅԻ ՓԱՌԱՏՈՆ՝ ԱՄԱԼՑԻՒՄ

Ախալցխեում անցկացվեց հացի փառատոն, որի շրջանակներում, հոկտեմբերի 22-ին, Ախալցխեի բերրի տարածքում, ողջ օրվա ընթացքում կայացան մշակութային եւ ժամանցի տարբեր միջոցառումներ:



Հացի փառատոնը, կենսաբանական գիտությունների «Էլկանի» ասոցիացիայի նախագահ Դավիթ Լոմիձե, երկրամասային վարչության տեղական ինքնակառավարման եւ քաղաքի հասարակայնության ներկայացուցիչներ:

ՆԻՆՈՇՄԻՆԴԱ. ԲԱՅՎԵՅ ՓՈՔՐ ԱՐԱԳՅԱԼ ՏԱՆՈՂ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՎԱԾ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Հոկտեմբերի 21-ին տեղի ունեցավ Փոքր Արագյալ գյուղի ասֆալտապատ ճանապարհի բացման հանդիսավոր արարողությունը: Միջոցառմանը ներկա էին Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Սմբատ Կյուրեղյանը, Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետ Անիվարդ Մոսոյանը, սակրեբուլոյի նախագահ Վահան Արոյանը, սակրեբուլոյի եւ քաղաքապետարանի պաշտոնատար անձիք, ինչպես նաեւ Փոքր Արագյալի հասարակությունը:



ՎԵՐԱՆՈՐՈԳՎՈՒՄ Ե ՄԱՌՆԵՈՒԼԻ-ՍԱԴԱԽԼՈ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Մառնեուլի-Սադախլո ճանապարհի 28 կմ երկարությամբ հատվածի վերանորոգման աշխատանքներն ավարտման փուլում են:

Ճանապարհի վերանորոգման աշխատանքների շրջանակներում, իրականացվել է ասֆալտբետոնե ծածկ, թարմացվել են վնասված ճանապարհային նշանները եւ իրականացվել ճանապարհների հորիզոնական գծանշման աշխատանքներ: Աշխատանքների արժեքը կազմում է 8 մլն լարի:

Մառնեուլի-Սադախլո ճանապարհը տանում է դեպի Հայաստանի հետ սահման: Ճանապարհային ենթակառուցվածքի կազմակերպումը մեծ նշանակություն ունի ինչպես տեղի բնակչության եւ ճանապարհներից օգտվողների, այնպես էլ՝ տարանցիկ երթեւեկության համար: